ՄԵԾ ԵՂԵՌՆ

ԿԱՂՆՈՒ ԴԱԼԱՐ ՇԻՎԸ

Այս պատմությունն ինձ պատմել է Եղիսաբեթ Բալթայանը, որի մայրը՝ Ազնիվը, ցեղասպանության զոհ դարձած գերդաստանի միակ փրկվածն է: Թե՛ մորը և թե՛ աղջկան տասնամյակներ շարունակ կրակե շապիկի պես այրել է գերդաստանի տխուր ճակատագիրը: Ազնիվ մայրիկը հիմա չկա, կան նրա որդիները, թոռներն ու ծոռները…

Դուռը դրսից թակեցին: Ծանոթ թակոց էր: Մեծ մայրիկը՝ Նազիկը, թաց ձեռքերը գոգնոցով սրբեց ու բացեց դուռը: Դռների մեջ հայտնվեց թուրք փաշան՝ աստիճանավորի համազգեստով, գլխին կարմիր ֆես:

- Ներս արի, տղա՛ս, - ասաց մեծ մայրիկը, - ինչո՞ւ ես շվարած կանգնել:

Թուրք փաշան իրոք շվարած էր ու այլայլված: Առաջ եկավ ու տանտիրոջ իրավունքով նստեց սեղանի մոտ:

- Վատ լուր ունեմ հայտնելու, մեծ մա՛մ, - գլխից ֆեսը հանելով ու մազերն ուղղելով ասաց փաշան: Նազիկ մայրիկին, զավակների նման նա էլ էր «մեծ մամ» անվանում:

Նազիկ մայրիկը սառեց: Հարևան սենյակից եկան հարսները, աղջիկները՝ Սիրանուշն ու Վարդանուշը: Տանը միայն ջահել հարսներն ու աղջիկներն էին մնացել: Տան տղամարդիկ պանդխտության էին մեկնել, իսկ Ռուբեն տղային թուրքերը երկու ամիս առաջ կախել էին քաղաքի հրապարակում:

Վեց տարեկան Ազնիվը վազքով մոտեցավ փաշային: Գիտեր՝ քաղցրավենիք կտա, կշոյի մազերը: Այս անգամ նստեցրեց ծնկներին և ուղղեց օձիքը:

- Տղա՛ս, մի բան ասա՝ հասկանամ, - տագնապած խոսեց Նազիկ մայրիկը:

Նրա անհանգստությունը գերդաստանի տղամարդիկ էին, արդյո՞ք օտարության մեջ նրանց բան է պատահել:

Վարդանուշը սուրճ բերեց, Սիրանուշը հալվա դրեց սեղանին:

- Դե խոսիր, տղա՛ս…

Նազիկ մայրիկի այդպիսի քնքշանքը թուրք փաշայի հանդեպ վաղուց էր: Դրկիցներ էին: Ծննդաբերությունից մահացել էր թուրք տղայի մայրը: Մի քանի օրական տղային իր գիրկն էր տվել ամուսինն ու ասել. «Մի կրծքով մեր երեխային կերակրիր, մյուսով՝ սրան»: Մեկ տարուց ավելի կուրծք է տվել թուրք երեխային ու մայրական բնազդով կապվել նրա հետ: Իր աչքի առաջ է մեծացել տղան, նա էլ չի մոռացել Նազիկ մայրիկին, նրա հայկական շեն օջախը: Միշտ այցելել է, որդիական սեր ու հարգանք տածել նրա ու նրա ընտանիքի նկատմամբ…

- Մեծ մամ, - թուրքի փաշան գրկից իջեցրեց Ազնիվին, - թուրքական կառավարության որոշում կա՝ տեղահան անել հայ ազգաբնակչությանը, կոտորել ու բնաջնջել հայ ազգը:

Թուրք փաշան ոտքի կանգնեց, բռնեց Նազիկ մայրիկի արդեն սմքած ձեռքերը.

- Խնդրում եմ, մեծ մամ, ընտանիքովդ մեր տուն տեղափոխվիր: Գիտես մեր պայմանները, իմ հնարավորությունները… Աչքի լույսի պես կպահեմ: Որքան էլ իմ հավատին հակառակ լինի՝ սրբապատկերներիդ համար մի անկյուն կառանձնացնեմ՝ աղոթքներդ այնտեղ կանես… Ինձ լսիր, մեծ մամ, փրկիր ընտանիքդ…

Բոլորը տագնապած մեծ մայրիկին էին նայում: Վարդանուշը գրկեց Ազնիվ քրոջը, սեղմեց կրծքին: Մյուսները ձեռքերով փակել էին երեսները ու լուռ արտասվում էին:

- Հենց այսօր՝ երեկոյան, մութով բոլորդ մեր տուն տեղափոխվեք, - շարունակեց թուրք փաշան, - ի՛նձ լսիր, մեծ մա՛մ, փրիկիր ընտանիքդ…

- Չէ, տղաս, ես ոչ մի տեղ չեմ գնա, - Վարդանուշի գրկից Ազնիվին վերցնելով՝ ասաց Նազիկ մայրիկը: Ու, վճռական դեմք ընդունելով, շարունակեց, - որտեղ իմ հայ ժողովուրդը, իմ ազգը, այնտեղ էլ իմ գերդաստանն ու ընտանիքը: Կբնաջնջեն հայերին, նրանց հետ էլ թող մենք կոտորվենք…

Հետո ցածրաձայն ավելացրեց.

- Ես ոչ մի տեղ չեմ գնա, ես թուրքի տուն ոտք չեմ դնի… Թուրք փաշան այլևս չվերադարձավ: Իսկ մի քանի օր հետո կատարվեց այն, ինչ պիտի կատարվեր…

❋❋❋

Ցուրտ ապրիլ էր:

Արդեն մեկ շաբաթ էր, ինչ Բալթայան գերդաստանը, մյուս հայ ընտանիքների հետ, միացել էր գաղթականների քարավանին: Ոչ ոք չգիտեր, թե ուր են գնում…

Հոգնած, ծարավ ու քաղցած քայլում էին: Փոքրիկ Ազնիվին գրկից գիրկ էին տեղափոխում: Սկզբում Նազիկ մայրիկը շալակած էր տանում թոռնուհուն, հետո երեխային վերցնում էին կամ Վարդանուշը, կամ Սիրանուշը: Մթնշաղ էր, և Ազնիվը, տատի ձեռքը բռնած, հազիվ քայլում էր:

- Ծարավ եմ, մեծ մամ, - թնկթնկում էր Ազնիվը, - սոված եմ, հաց եմ ուզում: Մեծ մամ, ոտքերս ցավում են, գրկիր, մեծ մամ:

Վարդանուշը հազիվ հասավ քրոջն ու գիրկն առավ նրան:

- Քույրիկս, նայիր՝ ծառերը ծաղկում են, տես՝ ի՞նչ գեղեցիկ է, - քրոջ ուշադրությունը շեղելու համար՝ հազիվ խոսել սկսեց Վարդանուշը:

Ինքն էլ քաղցից ու ծարավից ուժասպառ էր եղել:

- Ջուր եմ ուզում…, - լացելով քրոջ վիզը ամուր գրկեց Ազնիվը: Իսկ կողքից հոսում էր Եփրատը՝ գարնան ձնհալից ավելի հորդառատ ու վարար: Եփրա՛տը, որ և՛ իրենցն էր, և՛ իրենցը չէր: Քաղցից էր, թե հուսահատությունից՝ Վարդանուշն ուշակորույս տապալվեց գետնին: Ազնիվը դեռ գրկել էր քրոջ վիզը:

- Քոռանան աչքերս, - ծնկաչոք աղջկա վրա ընկավ Նազիկ մայրիկը, - Սիրանուշ, հասի՛ր:

Թուրք ոստկանն ավելի շուտ հասավ, գետնից միանգամից կտրեց փոքրիկ Ազնիվին ու մի կողմ շպրտեց: Լավ էր՝ երեխան ընկավ ծերունիներից մեկի գիրկը: Թուրք ոստիկանը, ինչպես վայրի գազան, հարձակվեց արդեն ուշքի եկած Վարդանուշի վրա: Բզկտեց նրա շորերը, ձեռքի դաշույնով պատռեց հնարավոր այն տեղերը, ուր ոսկիներ կարող էին լինել:

- Ասա, ասա՝ որտե՞ղ ես պահել:

Մի քանի ոսկիներ թափվեցին գետնին: Ու որպեսզի նույն գազանությունը չկրկնվի, Նազիկ մայրիկն էլ, հարսներն էլ իրենց պահած ոսկիները տվեցին: Նրանց շրջապատեցին նաև մյուս ոստիկանները: Սկսվեց թալանն ու գազանային տանջանքները: Ոսկու տենդն ու անասնական հրճվանքը խառնվել էին իրար: Թուրք գազանը մերկացնում էր կանաց ու աղջիկներին, ծաղրում ու բռնաբարում, սրի մի հարվածով անշնչացնում նրանց… Վարդանուշի գիսակներից բռնած՝ թուրք ոստիկանը քաշ տվեց նրան Եփրատի ջրերը: Գետն, ասես, ավելի էր հուզվել ու հորդացել: Ոստիկանն ուզում էր դաշույնը Վարդանուշի կոկորդը խրել, երբ մյուս ոստիկանը վրա հասավ.

- Մազերից ձիգ պահիր, - ասաց, - թրիս սրությունը պիտի ստուգեմ, և մի հարվածով թռցրեց աղջկա գլուխը:

Եփրատը, հարյուրավոր անմեղ հայերի հետ իր գիրկն առավ նաև Վարդանուշի դին…

Մթնեց: Սուգն ու վայնասունն աստիճանաբար մարեցին: Փոքրիկ Ազնիվը նստել էր տատի գիրկը: Քերծվել էր աղջկա ձեռքը, երկար քայլելուց ուռել էին ոտքերը, կարմրել…

Նազիկ մայրիկը շոյում էր թոռան ծնկները, համբուրում նրա դեմքը, այտերը, աչքերը…

- Քոռանամ ես, քոռանան աչքերս…, - մրմնջում էր նա:

Իսկ Ազնիվը մյուս ձեռքը մտցրել էր բաճկոնի մեջ ու չէր հանում:

- Ցավո՞ւմ է թևդ, քույրիկս, - անհանգստացավ Սիրանուշը:

- Չէ, չի ցավում, - ու սկսեց արտասվել: - Չեմ տա, ոչ մեկին չեմ տա:

Նրանց շրջապատեցին ուրիշ կանայք, ծերեր՝ հո բան չի՞ պատահել աղջկան:

- Չեմ տա, չեմ թողնի շպրտեն ջուրը…

Սիրանուշը քրոջ ձեռքը մի կերպ բաճկոնի տակից հանեց: Ազնիվն ամուր բռնել էր փոքրիկ մի տիկնիկ:

- Չեմ տա, իմ տիկնիկին չեմ թողնի ըսպանեն…

Հաջորդ օրը, կեսօրին, գաղթականների քարավանը դադար առավ: Թուրք ոստիկան-ները կարծես մեղմացել էին: Ջուր ու հաց սկսեցին բաժանել: Խոշտանգման ու վիրավո-ռանքի ոչ մի քայլ: Ընդհակառակը՝ հորդորում էին:

- Հանգստացեք, առջևում դեռ շատ ճանապարհ կա անցնելու:

Քիչ հետո պարզվեց նրանց աղվեսային խորամանկությունը: Քարավանին էին մոտեցել ամերիկյան որբանոցի աշխատակիցները և, կառավարության որոշման համաձայն, հավաքագրում էին անչափահասների: Նրանց մեջ ընդգրկվեց նաև վեցամյա Ազնիվը:



- Քեզ բարի ճանապարհ ու բարի բախտ, քույրիկս, - լացակումած ասաց Սիրանուշը:

- Տուն ու տեղ ստեղծիր ու մի մոռացիր գերդաստանդ, - Ազնիվին կրծքին սեղմելով՝ ասաց Նազիկ մայրիկը: Հիշողությանդ մեջ կպահես տանջանքներիդ ճանապարհը: Եվ ձեռքի հացը մեկնեց թոռնուհուն, - վերցրու, քաղցած չմնաս:

Իսկ Ազնիվը կախվել էր Սիրանուշ քրոջ փեշից.

- Ես չեմ ուզում գնալ, ես իմ քույրիկին եմ ուզում…

Բեռնատարներն արդեն լցվել էին որբ ու տկլոր երեխաներով: Կծկված երեխաների շարքում Ազնիվն աչքը չէր կտրում քարավանից: Որոնում էր տատին, քրոջը, հարազատներին: Քարավանը օձի պես ձգվում էր դեպի ավազուտները:

Առջևում Տեր-Զորն էր…

❋❋❋

Ուրախ, տխուր անցան Ազնիվ Բալթայանի որբանոցային տարիները: Այստեղ էլ հանդիպեց իր ապագա ամուսնուն՝ Ազարիա Պարտակչյանին: Երկուսն էլ Սեբաստիայից էին: Ազնիվը Տիվրիկ քաղաքից էր, Ազարիան՝ Պատրին գյուղից: Երկուսի ճակատագիրն էլ խաչվեցին ամերիկյան որբանոցում, որ հետագայում նոր գերդաստանի շիվերը պիտի դառնային: Ամուսնացան, քսան տարի ապրեցին Հունաստանի Սալոնիկ քաղաքում, 1946-ին երեք զավակների հետ վերադարձան Հայաստան: Գերդաստանին բաժին ընկած ողբերգությունը անբաժան է եղել տիկին Ազնիվի հիշողությունից: Բայց ավելի շատ նա հիշում էր ամուսնու խոսքերը իրենց նշանադրության օրը, այն պահը, երբ նշանի մատանին նվիրելով՝ շշնջացել է իր ականջին.

- Երկուսս էլ կոտորված գերդաստանների զավակներ ենք: Մենք նրանց փրկված շիվերն ենք: Արի ուխտ անենք, որ այդ շիվերը հյուսվեն միմյանց ու դառնան հաստաբուն կաղնի…

Եվ հաստաբուն այդ կաղնին այսօր նոր ծիլեր է տալիս…

Սպարտակ Ասոյան

ԳԱՐՈՒՆ ԿԳԱ

Մարդը հոգոց հանեց ու թերթեց օրացույցը: Արցունքի մոլորված մի կաթիլ սահեց այտերն ի վար: Լացելու ուժ չուներ: Թախիծը մաշող էր, ցավը՝ հին ու բութ: Մտքերը սառն էին, ինչպես այն գարունն էր՝ արյունոտ անապատներ, անկենդան ու հոշոտված մարմիններ… Լաց, աղերսանք… Հայրը, մայրը, քույրը, եղբայրը… Շատ էին… Փրկվեց միայն ինքը: Դա փրկություն էր, որ ոչ թե ուրախություն է ծնում, այլ՝ սփոփանք: Ու քանի քանիսը պիտի ապրեն՝ եղեռնը հիշողության մտքի ու սրտի ամեն մի ծալքում դրոշմած: Ինչքա~ն տարիներ են անցել ու չեն կարողացել ծածկել արյունը բյուրավոր մարդկանց, ճիչը խելակորույս մայրերի… Հողը հագեցավ ծով արյունով: Բորենիները երբեք այդքան կուշտ չէին եղել: Արցունքները փոխարինեցին անձրևներին, իսկ երկինքը մթնել էր…

Հայաստանն առանց հայերի, ու արցունքների միջից մարդը ժպտաց: Դառը ուրախությունը խառնվեց ափսոսանքի ու ցավի հետ: Ո~չ, թեկուզ հազարավոր տարիների ցավը սրտում՝ հայը ապրում է: Ու ամեն հայ մարդու աչքերում կա մի կաթիլ այդ տխրությունից, թախիծ կա, ցավ, տագնապ, համառություն ու հաղթանակ:

Գարուն կգա… Լրիվ ուրիշ գարուն, և այն կշրջի Հայաստան աշխարհում… Եվ Հայոց ցեղասպանությունն իր արդարացի ճանաչումը կգտնի, ու գարունը շփոթված կժպտա հայ մարդուն, աշխարհին…

Արմինե Սարգսյան